

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարինո համար 12 ֆր.  
 արևիկա 7 "  
 վեցուկայ Արսասահմանի  
 համար սուրեկու 15 ֆր.  
 վեցուկայ 8 "  
 Ավերիկայի համար  
 սուրեկու 3 շյ.  
 վեցուկայ 1.50 "

Եսևնուցման տղը ա  
 ուսթին երեսին համար  
 40 սանթիմ իսկ վերջին  
 երեսին համար 20 սան-  
 թիմ է. երեսին աւելի  
 սնկուկներու համար  
 20 0/0 գեղը կրլայ:

Վանայի համար ձեռ  
 ֆե 40 սանթիմ է

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱԿՈՒՆԻ ՉՈՐԵՔՈՒՄ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ  
 դրկի խմբագրութեան  
 նասցիին

Редакция на вѣстникъ  
 "Шаржумъ"  
 Варна

Redaction du journal  
 "Charjoum"  
 Varna (Bulgarie)

Պուշկարինոյ համար  
 ձեռք 15 ՍԱՆԹԻՄ  
 Արսասահմանի համար  
 ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ լեզ  
 տուի

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՄԸ ԲԱԺԵԿԻՆԸ ՊԷՏՐ ԵՒ ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԷ

## Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎՈՐՈՒԹՅՆԵՆԵՆԵՐՈՒՆ  
 ԽՈՒՆՈՐԵԱՆ ՍՕՑԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՎԻՃԱԿ  
 ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոնակ գնել փոփոխողները կրնան  
 իրեն դիմել  
 Ձար-Պորիս փողոց Վանա

## ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ

Խմբագրութիւնից հեռու լինե-  
 լով ժամանակին չը կարողացայ  
 այս յօդուածը հասցնել. մինչ-  
 քան անցնող տարին «Շարժում»-ի  
 թիւերի սմեանքներու շնորհիւ  
 ողական տարին եղաւ և անշուշտ  
 մեծ հետեւանքներ պէտք է ու-  
 նենայ նրա ապագայի վճարներ-  
 մամբ...

Մենք, ոչ առանց բարի հը  
 պարտութեան, կարող ենք ասել  
 զայն շատ քիչ հայ թերթ իր նա-  
 ռադրած նշանաբանին այնքան  
 ուժեղ տարիմ կերպով է ծառայել,  
 մինչև «Շարժում»-ի

Բ. Թ տարի առաջ, թերթի ա-  
 ռադիս համարում խմբագրութեան  
 կողմից յայտարարված էր մօ-  
 տաւորապէս հետեւեալը. «Շար-  
 ժում»-ի նպատակը պէտք է լինի  
 անխնայ կերպով պայքարել հա-  
 յույթեան մէջ տեղաւորված բոլոր  
 այն միկրոօրէնի դէմ, որոնք  
 այսպէս թէ այնպէս արգելք են  
 հաղթանակ հայ կեանքի իրա-  
 կան յառաջդիմութեան և սղա-  
 տագրութեան գործին:

«Շարժում»-ը իր այդ նշանա  
 բանին հաւատարիմ մնաց միշտ.  
 Իսկ ութերորդ տարում նա չը  
 վարանց մատնանշել բացօթէն  
 և իր կուսակցութեան մէջ առա-  
 ջարդակալները, որոնք ըս-  
 պառնալ էին կուսակցութեան  
 գոյութեան...

Այդ տեսակ երեւոյթներ հայ  
 կեանքի մէջ բացառիկ են. և  
 դրա համար վէրքերը թագցնե-  
 լու, անային վտանգաւոր միջոց-  
 ներով բժշկելու սովոր տարրերը,

մանաւանդ կուսակցութեան մի-  
 ջից. կատակցիին ու սկսվեց  
 կատակի. լիբը, ստոր միջոցնե-  
 րով օժտված պայքարը «Շար-  
 ժում»-ի ու մեր դէմ:

«Շարժում»-ը եօթ տարի գրե-  
 թէ մեն մենակ կուրծք էր տել  
 հակայիդափոխական տարրի բո-  
 լոր հալածանքներին ու դաւե-  
 րին և այդ պայքարում կոզած  
 ու կոփված արդէն պատրաստ էր  
 կուրծք տալու և կուսակցներին  
 խելակորոյս հարածներին. Եւ  
 նա կուրծք տեց, առանց վա-  
 րանելու առանց ետ ընկրկելու...

Այստեղ մենք ասելուք ենք  
 համարում մանրամասնօրէն կանգ  
 առնել այն աղտոտ, ստրկական  
 միջոցներով փրա. որ Գոշնակցու-  
 թեան մէջ տեղաւորված մեծ ու  
 խոշոր ստոր տիպերը ձեռք առան  
 «Շարժում»-ը տապալելու համար  
 և դեռ շարունակում են:

Չզուելի էին այդ միջոցները և  
 նրանք կը կազմեն մեր յիգա-  
 փոխական, մանաւանդ Գոշնակ-  
 ցութեան պատմութեան արատա-  
 ւորիչ էջերը, որի արձանագրու-  
 մը մանրամասնօրէն հէնց մենք  
 կը կատարենք ժամանակին...

Ի հարկ է մենք հաւատարիմ  
 կը մնանք «Շարժում»-ի նախադ-  
 րած նպատակին և յառաջիկայ  
 տարում, ինչպէս և միշտ քանի  
 նա գոյութիւն կունենայ. Թող  
 ապահով լինին հայ հասարակու-  
 թիւնը և մեզ վստահող ընկերնե-  
 րը որ «Շարժում»-ի անկախու-  
 թիւնը ոչ մի գնով չի կորցնի  
 նա չի լինի ոչ վճարված «Հայ-  
 րենիք» և ոչ մի ուրիշ այլ թերթի  
 կուսակցութեան ոչ սպառնալիք-  
 ները. ոչ շոյանքները չեն կա-  
 րող «Շարժում»-ին շեղել իր նը-  
 պատակից և անխնայ քննադա-  
 տական ուղղութիւնից. ինչպէս  
 չեն կարողացել շեղել մինչեւ  
 օրս մանուկաճակատը և փոթոր-  
 կալից օրերում...

Ի հարկ է այդ ուղղութեան հա-  
 ւատարիմ մնալը մեզ աժան չէ  
 նստել և չի նստի... Բայց մեզ  
 միտնալու և զօրավիթ է հան-  
 դիսանում այն համոզումը թէ՛

հասարակական ցաւերին դար-  
 ման տանելու համար անկեղծօ-  
 րէն աշխատող մարդիկ պարտա-  
 ւոր են ամէն կերպ տանջվել հա-  
 սարակական կեանքը բարելաւ-  
 լու նպատակ ունեցող ծրագրի-  
 ների գոնէ մի մասը իրագործե-  
 լու համար... Սա շատ իտէալա-  
 կան է ներկայ նիւթապաշտ դա-  
 րում, բայց ինչ արած որ իրա-  
 կանութիւն է:

ՎԱՐՂՕ

40 փետրվար  
 Պարիզ

## Բ Ա Ց Ն Ա Մ Ա Կ

ՊԱՏ. ԹՈՒՄՍՆԱՆԻՆ  
 Լրբութեան պարզ դէմքը  
 բնաւ չը տեսնուի մին-  
 չեւ չը գործածուի:  
 ԵՆԻՍԻՐ

(Շար. նախ. թիւ 16)

Անրգերը թէ ասան, թէ գործի,  
 թէ ժողովներու, ակումբներու եւ  
 խնճոյքներու մէջ ազգային ոգին  
 վառ պահող ամենազօրաւոր միջոց-  
 ներն են. կուսակցութեան:

Այդպիսի գիտէ՞ք եզեր, պատուե-  
 լի. բայց գիտէ՞ք նոյնպէս, թէ կը  
 ստէք, կը կեղծէք նոյն ձեր հաւատ-  
 քին ու ձեր համոզման դէմ:

Ճիշդ է որ ազգային երգերը «ազ-  
 գային ոգին» վառ պահող միջոցներ  
 են. եթէ այո, ուրեմն, զանոնք  
 խափանելի ալ «ազգային ոգին» ձեռ-  
 ցնելու մարտիւն եւ բթացնելու ջան-  
 քեր, ինչ որ կը կեղծէ մեզ այլ գրեթե  
 բախտաբար շատ ամուլ հետեւանք-  
 ներով, թէ որ գիտէիք թէ ազգա-  
 յին ոգին վառ պահելու համար ան-  
 հրաժեշտ է ազգային երգ, ինչու ու  
 րեմն կը խլէիք ատոնք մեր ձեռքէն,  
 տալով ատոնց փոխարէն Պայպլ Հա-  
 ուզեան անբանութիւններուն գլուխ  
 գործոցները: Կը յիշէ՞ք, պատուելի,  
 թէ քանի՞ քանի՞ անգամներ որոշած  
 էիք դադրեցնել տալ բոլոր ազգային  
 յեզո փոխական կեանքով զբաղուող  
 թերթերն ու հանդէսները՝ որոնք  
 կուզարկուէին ձրիբարբ, եւ հրամ-  
 ցնել անոնց փոխարէն կարգ մը պոլ-  
 սակաւ տիրացուներու արտադրու-  
 թիւնները: Մտացած էք թէ քանի  
 քանի անգամ կուրծք յարուցած ենք  
 ձեզ հետ՝ որպէս զի ձեր այդ մտադ-  
 րութիւնը չը կրնաք իրականացնել:  
 Ազգային երգի շատագով ու թե-

լադրող... եւ այդ ալ դուք... Ո՛հ,  
 սինիզմ: Բայց գիտե՛մ նպատակներդ.  
 ձեր «խօսքը ձեր գործին մէջն է».  
 այնպէս է, Լաւ ուրեմն պիտի տես-  
 նենք:

Ձեր նախորդ «սանդուղ» մօտ եր-  
 գելու անբացատրելի մոլուկներն մը  
 ըլլալը կարծեմ մոռցած չէք. Սա  
 հաճելի չէր ձեզ, որովհետեւ մէջը  
 չափէն աւելի «զարնենք կոտրենք»  
 կային. Ուստի երեւան բերք պա-  
 նոնազիր» մը՝ որով կարգիւնէր կի-  
 րակի օրերը շատ պոռայ, Ձայները  
 իջան. բայց գոհացում չստացաք  
 դուք, որովհետեւ նպատակներդ այլ  
 էր. Ու օր մըն ալ, Մոնուդի գիշեր  
 մը, մեզ չնուիրեցիք, մէկ-մէկ նը-  
 պարավաճառի տետրակ, որուն յա-  
 ջորդ օրը, դուք, որ երգ ընդօրի-  
 նակելը անօգուտս բան կը յայտա-  
 բարէիք, նստեցուցիք ու ընդօրի-  
 նակել տուիք հարիւր մը երգ, (նը-  
 մուշները քիչ մը վարը), որոնցմէ  
 կերգէիք տասնեակներով առտու  
 եւ իրիկուն, ընկերակցութեամբ  
 «Սուրբ գրքին»:

Ինչ եղաւ արդիւնքը: — Սա՛ որ  
 տղայք, այդ հոգի պօքացնող լրբը-  
 կութիւնները կրկնելով ու վերակրկ-  
 նելով, մոռցան իսկական բռնեքը  
 ազգային երգերուն: Ա՛յ ուրախ է-  
 իք. ա՛յ հասած էիք փառքերնուդ:  
 Ա՛յ «կանոն» չկար «սուրբ օրը» չե-  
 րգելու. Սրբանուէր մատանուդ դէմքն  
 ալ մատոննայական միտով կը  
 պայծառանար՝ նշարելով տղոց տի-  
 րոջ փարախին մերձեցումը. առանց  
 գիտնալու, ողբալի՛ էակ, զի ատոնք  
 առհասարակ ծաղր կերպուէին: Մի-  
 թիւններու մէջ ալ, տղոցմէ ոմանք  
 կապոյտ շալվարով եւ կանաչ-կար-  
 միր պաշլիկով՝ այդ «ազգային հա-  
 յերէն տաղերը» կը հրամցնէին անգ-  
 լիացոց, եւ պղտիկ փառքով մը չէր  
 որ կը հռչակէիք անոնց՝ թէ սա ի-  
 րենց երգարանին մէջ գտնուած այս-  
 ինչ երգին համապատասխան էր (ա-  
 ռանց պարզապէս ընելու անոնց զուտ  
 թարգմանութիւնը՝ Պայպլ Հաուզեան  
 ցաւազարներէ):

Պատուելի, այդ երգերու հաւաքա-  
 ծոն մօտս ունիմ եւ մտադիր եմ, օ-  
 րին մէկը հրատարակութեան յանձ-  
 նել՝ որպէս անտիպ գոհար ձեր հնա-  
 րագիտութեան եւ կենդանի ապա-  
 ցոյց ձեր ազգային երգերուն ջա-  
 տագով մը ըլլալուդ:

Ո՛վ հայրենասէր պատուելի, «Տալ  
 ւորիկը իսպառ արգիլելով եւ անոր  
 փոխարէն տուած սա հետեւեալ գո-  
 հարներդ տարակոյս կը թողու-  
 թէ ինչպիսի բաղձացող մըն էք ազ-

զային երգերու ընդհանրացման : Ժամն աղօթքի , ժամն աղօթքի , Մխիթարի ըլլաւ ինծի . Մինչև Փասքա լեռնէն նայիմ , Տեսնեմ իմ տունն երկնային : Տկար մարմինս պիտի ձգեմ , Տէրոջս քովն պիտի ելլեմ , Ու երթալով երգեմ պիտի , Ժամն աղօթքի , ժամն աղօթքի : Կը տեսնէ՞ք , պատուելի՛ , որ Հայաստանը փրկելու համար մեզ կը հանէիք Փասքա լեռը եւ հոնկէ տէրօջը տունը կը զրկէիք եւ քիչ մը վար ալ , որպէս արգասիք ձեր բանաստեղծական ներշնչման , կաւելցընէիք :

Հայ ազգրտիք , մեր աղբրտիք , Ամենեւին մի՛ վհատիք . Ազատութեան սիրով զեղուն Աղօթեմք միշտ առտու իրկուն : Է , ի հարկէ , մեր քնացած ատեն , ձեր բարի Աստուածը կուգար ու կազատէր մեզ , ինչպէս որ ազատեց ձեզ ձեր շղթաներէն . . .

Ո՛ր մէկը զնեմ հոս , պատուելի՛ , ձեր այդ խաղաղութիւններուն . մէկով կամ տասնով չեն ատոնք : Կը յիշե՞ք սա , որ կերգուէր «Ահա կերթամ սիրելի մայրի վրայ : —

Վեր նայէ՛ , վեր , սիրելի հայր , Թող վշտերդ ձանձարալի .

Վեր նայէ՛ , վեր , Յիսուսին միշտ , Որ սիրեց մեզ աւելի :

Եւ , այնքան վեր նայեցանք՝ որ վզերնիս ցաւի սպաս . բայց եւ այնպէս , ստոնք կընէիք՝ ձեր «ազգային ոգի» արթնցնելու տենչէն մղեալ :

Հոս չեմ կրնար յառաջ բերել բոլոր միւսները : Ամէնքն ալ միեւնոյն տխրաբարութիւններն են՝ որոնցմով մատաղ մտքերը կապականէիք , կանչահացնէիք : Բաւականաչափ տեղ չունիմ տրամադրելի հոս զետեղելու ամբողջովին «Հիմի էլ լռենք»ի , «Ի փիւր ձայնից» , Ազատն Աստուած» , եւ , մէկ խօսքով , երգարաննուդ մէջ գտնուած իւրաքանչիւր երգին յարմարեցածնից՝ որոնք պարտաւոր էինք երգել փոխան բնագիրներուն : Բայց , այդ անմահ գոհարներուն ուրիշները եւս արժանացնելու համար , պիտի խնդրեմ խմբագրէս

թոյլ տալ գոնէ կարգ մը հատուածներ զնեւ . — Ահա ատոնք :

Ինչպէս որ եմ , մեղքով լեցուած , Խեղճ մեղաւոր կորսուած , Աչքերս զէպի փրկիչն ուղղած Կան Աստուծոյ քեզի կուգամ : Ի փիւր ձայնիցնի վրայ — (Մէջի համարը)

Ես բարկութեան արժան որդի , Տէր Յիսուսէն շնորհք դտայ . Ինք մեզ զատուց պատր քակեց , Եւ ես տիրոջս հետ միացայ : Ո՛վ կատարեց այս գիտութիւն Ողորմութիւն , ողորմութիւն :

«Ո՛ր , ի՛նչ անուշ»ի վրայ —

Հաւ բարեկամ մը կայ վերերն , Յիսուս Գրիստոս է իր անունն . Այս աշխարհիս բարեկամներն , Եւ տող կանցնին չեն հաստատուն . Ուստի թող ես անհոգ չըլլամ . Յիսուսն ընել ինձ բարեկամ :

«Երբոր բացուին . — Կիրիլիան» —

Նրանիկ այն օրն է , Տէր . Որ ես բաժինս քեզ ըրի :

Ուրախ հոգիս անդու իր սէրն . Ու ցնծութիւն պատմէ պիտի :

«Ազնիւ ընկեր»ի վրայ . —

Ողորմէ ինձ , ողորմէ ինձ , Ով որդի Դաւթի Գրիստոս . Այսպէս կաղաչէր ճամբուն վրայ Կոյր , ազգաս Բարդիմէոս :

«Մեր հայրերիք»ի վրայ . —

Ի՛՞՞՞ սուրբ հայր ինձ ցուցուցեր ես , Յոյսս է միայն քեզմէ :

Օրէ որ զիս անցուցեր ես , Բազմաթիւ վտանգներէ :

«Եկել է գարուն»ի վրայ . —

Ի՛նչու գուր կըսէք թէ գեո կանուխ է , Երկնից մահուան վրայ խորհիլ .

Ուշը անյոյս է , Ծաղիկ մը շուտով թուով էնարէ , Ինձ ալ այսօր հնար է մեռնիլ .

Ուշը անյոյս է .

«Տեսէք աղաւթ»ի վրայ . —

Ինձ սէլը եղաւ հովիւ կառավար Եւ ոչ մէկ բանի կարօտ չեմ ըլլար Օրիս անվարձան գաշտեր խոտաւէս : Պիտի ճարակեմ ընտրեալ հօտիկ հետ . Պատուելի՛ , Պը կարմրի՞ք արգեօք ասոնք տեսնելով , այս խաղաղութիւնները , որոնցմով կերակրեցիք մեզ

ամբողջ երկու-երեք տարի : Չէ՞ք ամչնար , պատուելի՛ , այդքան շքեք լիլէ վերջ այդ երգերու նուիրական խօսքերուն դէմ , այսօր ալ , ինքզինքնից «հայրենասէր» ծախելու թափով , ելած էք ազգային երգերու հաւաքածոյ կը հրամանէք հայ հասարակութեան , որպէս միջոց ազգային ոգիին վառ պահելու : Եթէ համոզուած էիք այդ բանին , ինչու առիթ զայն մեր ձեռքէն ու տուիք վերջիւնաւորը եւ գեո բազմաթիւ ուրիշ անբանակերտ արտագրութիւններ

Ամօթ է , պատուելի , ամօթ , ամօթ , ամօթ . . . Ձեր ազգային երգարանն ալ ձեզի , բարիքն ալ , լռեցէք ու մնացէք անկիրանիդ : Երեսնից թքեմք՝ անձրեւ կուգայ ըսիք . Բայց գոնէ տարինուդ եւ ձորուդ նուր քաշուեցէք . . . Գիտե՞ք թէ ձեր ազգային երգի խօսքը յոգնած է չեւրուն յակ ծիծաղը կը շարժէ . Աստուծէ շէք վախճալ . մարդոցմէ չէք ամչնար , սակայն , գոնէ մինչեւ օրս ըսուածներէն զգացուելով՝ հարկ ու պահանջուած լռութիւնը պահեցէք . Կը յուսամ այսքանը բաւական կը համարէք ներկայիս համար , որով կը լիւսնայ , ի զիմաց ձեր «պարտաւոր աշակերտներուն» եւ իմ միշտ մտերիմ ընկերներուն՝ ձեզի ծանօթ Մ . Բ . Փ .

Յ . Գ . — Երկու խօսք եւս ընթերցողներուն . Կրտսեմ թէ վերեւ գրած երգերու հատուածներս պօքանքէ անգիրն՝ ծիծաղ ալ կը շարժեն . Ինտեւարար , անոնք որ ստամոքսի տրեկարութիւն ունին եւ միեւնոյն ատեն սեւամազութեան երթակայ , կրնան Պոլսոյ Պայպլ Հաուզին հրատարակած Հոգեւոր երգերու հաւաքածոն ձեռք ձգելով գտնել զբարձր երգերու ամբողջութիւնները եւ երգել . Կրտսեմ թէ զժողովրդի կայ քիչ մը՝ սրովիտեւ հանգր կատուած կամ աւելցած են պատուելիին շնորհիւ՝ յարմարեցնելու համար մեր երգերուն . բայց , կարելի է յաղիկ ատոնք .

Եթէ ատոնք չը բուեն , կրնամ ուրիշներ եւս ցոյց տալ . Ենտրիւ «հայրենասէր պատուելի եւ բոթեզգամ մը զործողութիւն կատարեց կը նոյ մը վրայ կիր մեծապէս մաքսոնեցաւ այս յամաթէոս» ին դէմ , բայց Պետրոս շարունակեց զործողութիւնը եւ կիր մեծաւ : Պետրոս ներկայ եղաւ էնոր թաղական :

Իր սենեկապանը կը բողոքէր կը նոյ մը զէմ ունեցած վարմունքին համար : Պետրոս իմացաւ որ կրնոյ արդարացումը իւր գէշ ակոսան է . . . Ծարբ բերել տուաւ կիրնը , քայեց երկու տկուան հակառակ էնոր ճիշտութեան եւ արցունքին :

սօր կարապետ Թուստանին , խմբագիր-անօրէն եւ սպազորիչ Պատանիի . մեծ պաշար մը ունիմ ձօսաատոնցմէ .

նոյն

Մենք եւ Մեր ԲԱՂԴԱԿՆԵՐԸ

Ժամանակին անարժուածը հազորդեց իր ընթերցողներին Մակեդոնական — Յեղուփոսական ընկերութիւններու ի մի ձուլուիլը :

Վերջին տարիներու դժբախտութեանց ժամանակամիջոցին Մակեդոնացիներն բնաւ չը շուտարեցաւ սեղմեց իր շարքերը , չափեց չափչփեց . մտածեց ու ճամբայ մը փնտռեց ազգին վրայ ծանրացող բնոր թեթեցնելու , զսնի բարոյական ու նիւթական անկումէ փրկելու համար : Ազգի ցաւերին շատ մօտիկէն տեղեկ գործիչներ , մտան ժողովրդի խաւերի մէջ , բաժանեցին իրենց մէջ անոր ցաւերը . կեանքի զընով՝ պաշտպանեցին անոր կեանքը . նիւթականը : Արժիւններու պէս թառեցան լեռներու վրայ , բուերի նման աւերակներով մէջ նստած չը լացին , ագաւաւման չը շաղկարտեցին՝ ալ միշտ սպառնացան , ու խոյացան՝ հոն՝ ուր իրենց ներկայութիւնը անհրաժեշտ էր :

Այդ ցաւի հերոսները , ժողովրդի ցաւերը մեղմացնելու նպատակով , մերժեցին արտասահմանեան գործիչներու ցուցարար ու վտանգաւոր կապմակերպական շարժումները , ազաւջեցին , պաշտպանեցան , համապեցին որ ետ կեանք , ու երբ տեսան որ իրենց ակամալ կախող շիկայ , գարձուցին զէնքերնին անոնց ,

գամ մը զործողութիւն կատարեց կը նոյ մը վրայ կիր մեծապէս մաքսոնեցաւ այս յամաթէոս» ին դէմ , բայց Պետրոս շարունակեց զործողութիւնը եւ կիր մեծաւ : Պետրոս ներկայ եղաւ էնոր թաղական :

Իր սենեկապանը կը բողոքէր կը նոյ մը զէմ ունեցած վարմունքին համար : Պետրոս իմացաւ որ կրնոյ արդարացումը իւր գէշ ակոսան է . . . Ծարբ բերել տուաւ կիրնը , քայեց երկու տկուան հակառակ էնոր ճիշտութեան եւ արցունքին :

Եթէ երկանդ հետ լաւ չը վարուիս , բերնիդ ամէն մէկ ակոսանդուր կը քաշեմ , ըսաւ երիտասարդ վայրենին անխոզ :

Բան մը իմացաւ Անգլիոյ մէջ . աւելին իմացաւ Աւստրիա , որովհետեւ լուր եկաւ թէ Սօֆիա կը դաւադրէր իր զէմ՝ եղորը հետ :

Սօֆիա անբարպտոյ կիր մէջ : Իր լաւագոյն բարեկամները կը փառաբանէին զինքը իր մտաւոր յատկութեանց համար , այլ խոհեմարար լուռ էին իր դիմագծերուն նկատմամբ . այսուհանդերձ , ունէր սիրահար մը , որուն ժամանակին յարմար արտառոց

ԷՏԿԵՐ ՈՒՈԼՍ .

ԿԱՐՄԻՐ ԷՋԵՐ ՑԱՐԻՉՍԵՆ

Դ Ա Ն Ի Ճ Ն Պ Ե Տ Ր Ո Ս

Երկու տարի անցաւ թիւնը՝ որ զնաց արտասահման խնդրելու եւրօպական թագաւորներէն զփրանորոգելու բարեկամութեան հին կապը , կը պարունակէր մէջը Ոմի Պետրոս Միխայլով . — չը յանձնարարուած պաշտօնեայ մը Միխայլովի սահմանուած նամակները կը կրկին սահմանելի Պետրոս Միխայլովիս եւ այս հասարակ զինուորին կիրքը կը ներկայացնէր երիտասարդ ատաղձագործ մը՝ նաւչինողի գործիքներով շրջապատուած ու նշանաբանը — Աչկերտ մըն եմ , եւ վարպետներու կը կարօտիմ :

Ու այս կերպով Պետրոս զնաց եւրօպայի իմաստութիւնը ժողովելու , եւ լաւ ըրաւ :

Սիրահարուեցաւ Հոլանտացի սպասուհիներու , զինովցաւ Հոլանտացի քարիզէններու հետ եւ վարուեցաւ

նման յոռեկիրի գեղջուկի մը՝ ինչպէս որ էր . Աշխատեցաւ իր ձեռքերով ստաղձագործներու եւ նաւ շինողներու մօտ , սակայն , շատ քիչ յարգանք ատոր համար , վասնզի հող աւելի յարմար վայրն էր իրեն՝ քան արքունիքի մէջ :

Իր երիտասարդութեան , ատեղադիտակը գրաւիչ բան մ'էր . — Եւրօպայի մէջ խաղաղիկ մը՝ որ հովու ուղղութիւնը կը ցուցնէր , ուշադրութիւնը հրաւիրեց . Ամենէ աւելի , Եուէտիոյ մէջ , անիւ մը՝ որուն վրայ շարագործները կը փշրուէին՝ հաճոյ երեւցաւ իրեն , Ապպրեց հատ մը Թուսիոյ համար :

Անգլիոյ մէջ կը բնակէր Պաքիւկհըմ-Սըրիդ (Լօնտօն) բայց ի վերջոյ տեղափոխուեցաւ Տէղֆըրտ , նորէն աշխատեցաւ հոս — Եւ այնպիսի եղաւ նախով մը՝ որ հեռացման պահուն Սէյլըս Գորթէն , էվլիին , տէրը , պահանջեց եւ ստացաւ խոշոր գումար մը Բրիտանական կառավարութեանէն՝ որպէս հատուցում այս կէս-յիմար անբանին իր հաստատութեան հասուցած անելի վնասին փոխարէն :

Պատմիչներ կը ներկայացնեն

Պետրոսի շնորհիւ — ինչպէս արդիւնք իւր համեստութեան սակայն Պետրոս նոյնքան՝ զուրկ էր համեստութենէ , որքան ամօթխածութենէ , Միշտ հանգիստ կրգար երբ հետնէր ծառաներու եւ արտաւարներու , եւ բնաւ այնքան նեղուած՝ երբ Գերմանական Արտուսիքին մէջ , կը տրուէր իրեն սեղանի անձնոց մը .

Մէկ յատկութիւն մը բարձր կը կենայ իր նկարագրին մէջ . — Իր անսաման աշխոյժը : Աւելցուցէք ատոր հետաքրքրութիւն մը՝ որ կը մղէր զինքը խանութիէն դէպի արքունիք . «Օրօք-Օրօք» (յետ մահու քննութեան) սենեակէն աշխատանքը որ ըրաւ զինքը փոփոխակի նաւակառոյց հոթիոյ-շինող , փղօկը տաշող , վերաբոյժ , քահանայ , զինուոր , նաւաստի , դահլիճ եւ փողար :

Կը պարծենար , նոյնպէս , իր ստամոքսաբու թիւնով , եւ մեծապէս կը հանէցնէիք զինքը՝ խնդրելով իրմէ ակառնիք քաշել , Տեղեկութիւն կը ստանար Բեթլեհեմի իւրեանդանցի բողոք շահեկան վերաբուժական պարագաներու նկատմամբ եւ երբեմն կը մասնակցէր գործողութեանց : Ան-

ու մակեդոնական հողը ներկայեցաւ ցուցարար կազմակերպութեան խմբակներու արիւնով։ Աւայսպէս ազգին ցաւով տոգորուող այդ ազնիւ ոգիները՝ հասան իրենց նպատակին։ Երևութապէս քիչ թէ շատ հանդարտեցաւ երկիրը։ ու յետոյ կէս մը սղիբսով, կէս մը սպառնալիքի տակ ստիպեցին արտաքին կազմակերպութիւնը որ ձուլուի իրեն մէջ, և այսպէս յաջողեցան Մակեդոնական յեղափոխական կուսակցութիւնները ի մի մերթաձուլել։ Ազգային ընել։

Հիմայ չկան յեղափոխական ընկերութիւններ՝ կայ ներկրի մէջ գործիչ մարմին մը միայն, որ այդ մասին կը խորհի կը վճռէ ու կը տնօրինէ։

Պուլկարիոյ մէջ այլ եւս գոյութիւն չունին Մակեդոնական յեղափոխական ընկերութիւններ։ կայ միայն Մակեդոնական Բարեփոխական ընկերութիւն մը, զոր ձեւեցին ու յորինեցին ազգովին, առանց քաղաքական ընկերական կուսակցական խտրութեան, ասոր գաղտնապէս օժանդակեց նաեւ կառավարութիւնը։ Աւ հիմայ ամէն քաղաք, աւան, երկու տընդուոր գիւղն իսկ ունի իր մէջ այս ընկերութեան ներկայացուցիչը, որու պաշտօնն է միմիայն հաւաքել դրամ, դրամ։

Մակեդոնացիները զարնուցան ու բզբեցին զիրար, սակայն հաստատ կուսակցութիւն չգրին հայրենիքի սուրբ գործը։

Մեր և անոնց միջև եղած հակասութիւնը մեծ է։

Հայութիւնը օրէ օր փոխանակ զգաստանալու ու ճգնելու բարոյական ու նիւթական անկումէ փրկուիլ, անդիտակցօրէն դէպի անոր կը գիւժէ կարծես, մու-

թին մէջ խարխաբելով և ինքզինքը խարխաբելով։

Իսկ հայրենիքը լքելով ու անպաշտպան ձգելով ի՛նչ յեղափոխական շարժումներ ալ ընենք, միշտ կը մնան ապարդիւն, կրկնական վնասարեք։ Անհարկի ու սահմանափակ ցոյցերը կը նմանին ինչ զոհարեցողութիւնով ալ ըլլան անոնք, այն խելագարի չափաբերութեանց ու գործառնութեանց որ կուզէ ծովին մէջ փոս ՏԵ Բանալ։

Տարիները կանցնին հազօր փորձութիւններով, ու մինքն դարձեալ չենք գիտեր անցեալէն դաս առնել ու զգելու մի ընթացքը, փոխանակ մեր ուշադրութիւնը կայացնելու մայր հայրենիքի վրայ, հոգեկան ու գրամական ոյժերը հոն կուտակելու, ազգը՝ ազգովին ուսումնասիրելու, արտասահմանեան պոռտախօսութիւններով, լական ազգասնեակ և կամ ցոյցեր սարքելով կուզենք փշոտել թերթական լուծը, կարելի՞ է մի՞թէ...

Իրաւունքը՝ զօրաւորին է, այս է օրէնքը, այս ճամբով պէտք է գնանք ազգովին։ Զօրաւոր ես՝ պէտք չունիս աղբուսելու, քու ուժիդ առջեւ կը խոնարհին ամենքը, կը ծափեն ու կը փառաբանեն։

Իսկ շատ պարզ է թէ՛ մենք կանոնաւոր պատերազմ չենք կրնար մղել թուրքի դէմ, սակայն կարող ենք ոտքի հանել կազմակերպուած այնպիսի ոյժ մը, որ իր մղած պարտիզանական մասնակի կռիւներով, կարելի ըլլայ ամիսներ թուրքին դիմադրել ու յոգնեցնել, ահա այն ժամանակ հարկաւոր են և ցոյցերը թուրքիոյ վաճառաշահ կեցողներու մէջ, սպառնալով

երուպական վաճառականութեան կազմակերպութեան, ու այսպէս ստիպելու Եւրոպան որ մեր դատին պաշտպանը կանգնի։

Սակայն մենք ցուցամոյ ենք, մենք մեր գործով ու ըրածով ինքզինքնիս կուզենք խարխաբել։ Ամենահին ժամանակներէ սկսած մինչեւ այսօր, միշտ սիրած ենք մեր ոյժերը շլատել, անգոսնելով մեզի տրուած խրատները, քարկոծելով ու ճգնելով սեւեցնել զանի՛ որ ձայն կը բարձրացնէ և կուզէ դէպի խոր խորատը առաջնորդող ճամբէն յետս ընկրկել մեր քայլերը։ Սրինակ առնենք Մակեդոնացիներէն։

Թէ բարոյապէս, թէ նիւթապէս կորսուելու ու փճանալու վրայ ենք, ասոր ճար մը մտածենք, և ոչ թէ մեր եսը միշտ յառաջ քշենք։

Ինչոր ու շերտիս դարձնենք Մայր Հայրենիքի վրայ, հոն ԳՏԹ ուսականի շարժերի աւազանին մէջ՝ իրենց ծնողներու ու սիրելիներու արիւնով մկրտուած հայութիւնը կոծնք, կոփենք ու զինենք, հոն վանայ ծովի, Տըլմուտի ափերի վրայ հրացանի բռնաբարելով, ու բերու կոծով պահանջենք մեր Իրաւունքն ու Ազատութիւնը։

ԱՆՈՒՇԱԽԱՆ

### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ստացած ենք Ռուսոնոգի ստորագրութեամբ գրութիւն մը, Յօդուածագիր պարոնը խօսելով վառնայի մէջ հաստատուած թատերասերներու Մասիս խմբին վրայ, ցաւ կը յայտնէ որ այդ խումբը ներքին զտնութեանց զոհ երթալով երկուքի բաժնուած է, որոնք զիրար կը չե-

զոքացնեն, Յօդուածագիրը յորդոր կը կարգայ անշատուող խումբերուն որ ձգեն իրենց կուսակցամոլութիւնը, պատիկ կիրքերը եւ իրենց առաջադրած նպատակը միայն ի նկատի ունենալով ջանան արդիւնաւոր գործունէութիւն ցոյց տալու։

—Ռուսոնոգէն կը տեղեկացնեն մեզ թէ, հոնադի հայ առետրական պաշտօնեաներն ալ հիմնած են վառնայի նման Հայ գրագիրներու ընկերութիւն մը, որուն մասնակցած են նաեւ հայ չորպաճիները։ Այս վերջինները միմիայն ձեռնարկին բարոյական ու նիւթական աջակցութիւն մը ըրած ըլլալու համար անդամակցած են եւ երբէք չի պիտի յանձն առնեն ու եւ է շահաբաժին առնել ընկերութենէն, բացի իրենց ստուած զուա զրամագումարէն։

—Լուսաբերի մէջ կը կարգանք թէ վարդանաց տօնին առթիւ Գահիրէի մէջ չքեղ երկոյթ մը սեղի ունեցեր է, ուր զանազան երգեր ու արատանութիւններ կատարուեր են Այդ երկոյթին մէջ խօսեր են Գեր. Եզնիկ Եպս. Ապահունի եւ Տօք. Տաղաւարեան, երկու ծանօթ հայ դէմքերը։ Երկուքին ալ ատենախօսութիւնը շատ շահեկան ու յուզիչ եղած է եւ մեծ տպաւորութիւն ձգած է ունկնդիրներուն վրայ, Գեր. Եզնիկ Եպս. իր անցեալ ու ներկայ կեանքէն հետաքրքրական դրուագներ յիշեր է որոնք ներկաներուն վրայ հզօր ներգործութիւն ունեցեր են։

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրեր երկրիս կառավարութիւնը, Սօֆիայի թուրք գործակառարութեան միջոցաւ, Բ. Իրան գիւմաճ է, ու Մակեդոնիոյ մէջ բնակող պուլկարներու վրայ ներգործուած բարբարոսութիւններու համար գանգատած։

Վերջին ամիսներու մէջ, տաճկական, ալպանական և յունական հրոսախմբերու կողմէ պուլկարներու գլխին եկած շարիք-

լեզուով նամակներ կը գրէր։ Ալ աւելին։ կուսակիցներունէր Մուկուա որով և Պետրոս յետ փութաց եւ չուտով տաք երկաթը, քնութիւն և կացիւնը ձնչեցին աստամբութիւնը։

Հարիւրաւոր գուլիներ բարձրագիր ցիցերը դարդարեցին, գաւաղիւնները կարծեցան խուճերով եւ գիւղերը՝ բեռնակառքերով էլ քաղաքին դուրսը նետուեցան՝ փոսելու համար։

Ի վան, — ի՛նչ եղաւ Ի վանը Մեռաւ. ոմանք կըսեն թոյնէ, ոմանք՝ քնութէ, — որ տառապեցաւ բանտի մէջ և մեռաւ բանտային ջերմէ, Յամենայն դէպս, անհետացաւ ան, նոյնը եղաւ և Սօֆիան, միայն թէ իւր բաղդը կը կարծուի ըլլալ վանքի մը մէջ։

Վախիզկաքի Պետրոսի անաջառ ըլլալու բաղձանքով, կը գովարանէ գային։ Այս պատմիչը մեծագոյն ջանագործ է որ Պետրոս ունեցած է որովհետեւ արդարացումի պարագայ մը կայ իր բոլոր բաժնեւորուն մէջ։ Մարդ մըն էր ան՝ մէկ պղպարով մը օրը կըսէ այս խանդավառը։ Գաղափար մըն էր՝ որ երկրի բոլոր գաւառակապորտները, գիւղիւններն ու լուսնոտները հաւաքուին սօղոյթի մը՝ որ

վիշա չը ճանչնար։ Գաղափար մըն էր՝ որ ան պէտք է նուրբագործէր և իրագործէր կրօնական գայթակեցուցիչ ձեռքնայ մը կեղծ քահանաներով ու կեղծ ծիսակատարութիւններով։

Ահա Պետրոսեան գաղափար մը՝ որ աւելի քան ուրիշը ցոյց կուտայ այլանդակ թնձուկը ու զեղին, Լրտեսելով դաւադրութիւն մը իր դէմ համանման շատ մը տարիներ առաջ կատարուածին, հոգէն հանել կուտայ նախորդ դաւադրութեան պահուն զխտտուածի մը մարմինը, և տասերկու խոզեր քաշուող քայլերի մը մէջ զնելով կը քաշկոտուի այն վայրը, ուր վերջին դաւին մասնակիցները քաւած էին ոճիւրը իրենց կեանքերով։

Բայցիւրը իր գմիղակ բեռով կը տեղաւորի կառափնատին ներքեւ այն պիսի ձեւով մը, որ երբ դատապարտուածները կը յօշոտուէին դանակով — մահուան ամենէ կամաց տեսակն էր որ գտած էր Պետրոս, — իրենց արիւնը կը հոսէր նախապէս դաւադրող անձին վրայ։

Հրատարակուած գիրք մը կայ՝


նալու համար անուները պաշտօնակիցներուն — զորս ու բախտութեամբ յայտնեց, — զարհուրելի, յիշելով որ Պետրոս անձամբ կը հսկէր արարքերն իր մահը՝ տանջանաց ներքեւ՝ առիթ մը եղաւ Պետրոսի զուարճութեան։

«Նոր նաւ մը ծովը իջեցուց և նախարարներու նետ կատակներ կընէր,» կըսէ պատմիչը, և ապա հրամայեց որ մետալ մը փակցուի նետեւեալ մակագրութիւնով։ — «Արշալոյսը պայծառ է»։

Նոյն իսկ կատարիւնէ չը յաջողեցաւ փրկել երիտասարդ Յարկիւլը ու այս արտակարգ կեռջ ազդեցութիւնը Պետրոսի վրայ՝ առաւել էր քան ու եւ է անհատ աշխարհի մէջ։

Ամբողջ պատմութիւն մը կարելի է գրել սոյն կատարիւնէի մասին։

(Շարունակելի)



անհատական շրջաբերութեան համար միայն, որ անգոսնելի է Անգլիա, և որ մանրամասնութիւններ կուտայ Պետրոսի զուարճութիւններէն ոմանց։

Պատմութիւն մը կայ թէ՛ Վոյթիւզը զգուած է տակաւին սոյն հատորին կէսը չը հասած, «կէս մը ներս է, եղած էր Վոյթիւզի բառասօքային դիտողութիւնը, բայց և կէս մալ սատանայ էր»։

Նրիտասարգութեան ատեն պատեհութիւն գտած էր ամուսնանալու — ապրեցաւ կնոջը նետ քանի մը ամիս և ապա թողուց զնի, իր մէկ ուղին Ալէքսիս, երբ փախաւ Սեստրիա և յետոյ Լիտուիա, երեւան գալով իր մասնակցութիւնը գաւառի մը՝ որուն հետ մայրը կապ ունէր, Պետրոս յաջողեցաւ մասնութիւնով ձեռք ձգել զայն։

Ալէքսիս եւ թարկուեցաւ ատենի, մայրը քնութի գաղափարուեցաւ ու աքսորուեցաւ, գաւաղիւններէն ոմանք ցցահարուեցան համ փշրուեցան անիւններու տակ եւ միւսները գլխատուեցան կամ անդամատուեցան։

Ալէքսիսի դատաւարութիւնը զաւելտ մըն էր, իր շարժարանքը՝ իմա-

ներու շատ մը պարագաներ տեղն  
ի տեղը յիշուած է ծանուցագրին  
մէջ, նոյնպէս ակնարկուած է թէ՛  
տաճկական կառավարութիւնները  
անխղճօրէն բնաւ չեն պաշտպա-  
ններ անմեղ պուլկար բնակչու-  
թիւնը, բացի ասկէ չեն թողարտ-  
րեր որ նա զինուի և հրոսախըմ-  
բերու թշնամութիւններու գէմ  
ինքնապաշտպանուի :

Այս յանձնելով Բ. Գրան ու-  
շագրութեան, պուլկարական  
կառավարութիւնը, Բ. Գրան կա-  
ռաւարկէ, պուլկար բնակչու-  
թեան զինուորուելուն համաձայ-  
նելու ինչպէս որ Պրիթօլիայի,  
նախկին կուսակալ հանգուցեալ  
Հալիլ Իփագը բաշայի օրով եղած  
է :

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### Թ Ո Ւ Ր Ի Ա

Խրատիկ իրաւունքը ոտնակոխ  
ընելով, տաճկական կառավարու-  
թիւնը թաստս կղզիին հանքերու  
շահաւորութիւնը, գերմանական  
ընկերութեան մը արտօնած է.  
որուն գէմ գաղղիական զեպա-  
նութիւնը խստիւ կը բողոքէ, և  
փրանսական հիւպատոս Բիէր  
Պուրկարիտեսի համար, որ այս  
հանքերու շահաւորութիւնը արտօ-  
նութիւնը արգէն ունի, գոհա-  
ցում կը պահանջէ : Կը հաւաս-  
տեն թէ՛ երբ Գերմանիան թաս-  
տսի մէջ վաճառականական ծո-  
վային կայան մը ունենայ, զոր  
Բ. Գրանը պաշտօնական առար-  
կումով մը, (մեր աղային արտա-  
ծումը դիւրացնելու նպատակով)  
որոշած է անոր տալ, Գերմանա-  
կան կառավարութիւնը որպէս  
պահանջաւ փոքրիկ զրահաւոր  
մը պիտի զրկէ հոն :

— Իբէքի մէջ բաւական լուրջ  
ալպանական ապստամբութիւն մը  
ծագած է : Ետտ մը Ալպանացի-  
ներ խռովարարներուն միացե-  
ր են : Իրիզրէնի զինուորական հը-  
րամանաւորի կողմանէ զրկուած  
զորազնգերը յաջողած են քա-  
ղաքը զրաւել : Պաշտօնապէս կը  
հաւատեն թէ կարգը վերահաս-  
տատուած է, սակայն Ալպանա-  
ցիներու մէջ յուշումը տակաւին  
կը շարունակէ : Կը վախցուի թէ  
առաջուրէն շատ աւելի բուն  
ապստամբական շարժում մը  
կընայ ծագի :

— Պաթէն՝ լրագրին մէջ  
լուր կայ թէ՛ Սուլթանը Ժօրիսին  
ներում պիտի շնորհէ, իսկ հայ  
գատապարտեալները ի՞նչ պիտի  
ըլլան :

— Արքունիքի զինուորական  
կուսակցութիւնը բուն գիմագ-  
րութիւն ցոյց կուտայ, թուրք  
զինուորներու, եգիպտական կա-  
ռավարութեան սեպական թապա-  
անուն երկրաբաժնէն ետ քաշ :

ուելու մասին Հակառակ անդիւա-  
կան զեպանութեան տրուած  
խոստումի. Ահապայի կառավար-  
չին ու է հրաման մը չէ տրուած  
այս մասին :

#### Ռ Ո Ւ Ս Ի Ա

Տուրքուքի իշխանը, կոմս Վի-  
թէի հրամանով բանտարկուած է.  
թէ ի՞նչ է պատճառը յայտնի չէ,  
սակայն այս բանտարկումը Բե-  
թերսպուրկի մէջ մեծ իրարան-  
ցում պատճառած է :

— Բեթերսպուրկեան լրագրի-  
ները, ամբողջ Ռուսիոյ մէջ, քա-  
ղաքական յանցանքով բանտար-  
կուածներու թիւը 70.000 կը  
հաշուեն, ասկէ դատ 20.000 հոգի  
կայ Սիպիւր արքերուած :

— Մաքսիմ Կորքին հիմայ  
Պէրլին կը գտնուի, և հոն կը  
սպասէ Մոսքվայի թատրոնի  
դերասաններու կողմանէ իր «Յո-  
տակը» ունու թատերադրութեան  
ներկայացումը :

— Պիլինինկ Սթանտարտ՝ լը  
րագրին Բեթերսպուրկէ կը հա-  
ղորդեն թէ՛ Պագուէն հասած  
վերջին լուրերու համաձայն, հոն  
խռովութիւնները տակաւին կը  
շարունակուին, հիմակու հիմայ  
օնթագրելի իսկ չէ քարիւղի  
գործարաններու մէջ կատարե-  
լապէս գործը սկսիլ, որովհետեւ  
կառավարական իշխանութիւն-  
ները բացէ իրաց թաթարները  
հայերու գէմ կը գլղոնեն : Աւա-  
զակութիւնները և սպաննու-  
թիւնները կը շարունակուին :

— Պենեպ Բոգէմքին՝ գրա-  
հաւորի ապստամբներու գատա-  
վարութիւնը լմացած է, տեղեկալ  
ճմիրը կախուելու գատապարտ  
ուած է, մեքենավար Անդոնէն  
քոն և Կլավքովը հրացանի բըռ-  
նուելու : Ամբաստանեալներէն 10  
հոգի անպարտ արձակուած, իսկ  
մնացածները տարբեր տարբեր  
ժամանակով շոյի համար թիա-  
վարութեան և հրահանգիչ զըն-  
գերու մէջ բանտարկութեան  
գատապարտուած են :

Մահուան գատապարտուած  
տեղեկալ ճմիրը խնդրած է որ  
զինքը հրացանի բռնեն փոխա-  
նակ կախուել, իսկ «Բրուդ» ա-  
նուն զրահաւորի նաւաստիները  
գործադուլ ըրած են, և ճմիրի  
մահուան գատապարտ փոփոխումը  
կը պահանջեն :

Վերջին ժամուս զինուորական  
իշխանութիւնները Բեթերսպուր-  
կէն հեռագիր մը ստացած են,  
որով կիմացուի թէ Յարը տե-  
ղեկալ ճմիրին ներած է :

— Պապարձակ — Միապետա-  
կան՝ կուսակցութեան պատկանող  
պատուիրակութիւն մը, Յարսքօէ  
Սէլօին մէջ Յարին ներկայացած  
է, ուղերձ մը մատուցանելու : Այս  
ուղերձը լսելէն վերջը, Յարը

հետեւեալ խօսքերը ուղղած է  
պատուիրակութեան. «Կը հաս-  
կընամ և կը գնահատեմ ձեր պա-  
ցումները, Բոլոր հոգուովս ձեզ կը  
յայտնեմ իմ խորին շնորհակա-  
լութիւնը ինչպէս նաեւ ընդհա-  
նուր Պապարձակ Միապետական»  
կուսակցութեան : Ըսէք անոնց  
որ ձեզի հոս զրկած են, թէ  
անցեալ տարուան 17 հոկտեմ-  
բերեան մանիֆէստով խոստաց-  
ուած բարենորոգումները պիտի  
գործադրուին անպատճառ : Սմ-  
բող Ռուսիոյ բնակչութեան, մեր  
տուած իրաւունքները ետ չենք  
կրնար կոչել երբէք :

Գալով իմ միապետութեան, նա  
պիտի մնայ այնպէս, ինչպէս որ  
եղած է հնուց ի վեր :

— Ռուսիոյ կառավարչական  
խորհուրդը, նոր գրահանուերի  
չինութեան համար նախատես  
ուած 20 միլիոն բուպլին ընդու-  
նեց :

— Իւսու բանաստեղծ Գորոլեն  
գոն, բաց նամակ մը ուղղած է  
կառավարական խորհուրդի ան-  
դամ Պիլինինկի, որով Սիրոչինցիի  
մէջ, անոր հրամանով տեղի ու-  
նեցած սպաննութիւնները ի  
յայտ կը բերէ, այս իսկ պատ-  
ճառաւ, նա երթարկուած է հա-  
լածանքի :

#### ՍԵՐՊԻԱ

Առժամանակեալ վաճառակա-  
նական համաձայնութեան մասին,  
Վիէննայէն հասած լուրերը նը-  
պատաւեր չեն : Սերպ կառավար-  
ութեան անասուններու արտա-  
ծութեան մասին ըրած առաջար-  
կը, Աւստրա—Հունգարիական կա-  
ռավարութիւնը չէ ընդունած :  
այսու հանգերձ բանակցութիւն-  
ները կը շարունակուին :

#### ՅՐԱՆՍԱ

Էտուարտ Պագաւորը, Բարիլի  
անդիւական զեպանի ընկերակ-  
ցութեամբ, մալիէրին կողմանէ  
ընդունուած է : Տեսակցութիւնը  
40 վայրկեան տեւած է : Հան-  
րապետութեան նախագահը, Էտ-  
ուարտ իրագաւորին փոխագարձ  
այցելութեան գացած է անդիւա-  
կան զեպանատունը :

Հանրապետութեան նախկին  
նախագահ, Լուպէն իր այցա-  
քարգը ձգած է զեպանատունը :  
Երեկոյեան, անդիւական զե-  
պանը ընտանեկան ճաշկերոյթ  
մը տուած է : ուր ներկայ զըն-  
ուեր են մալիէրը ինչպէս նաեւ  
Բուլիէն :

#### ՄԱՐՈՒ

Ալէքիբրասէն «Էգօ տր Բարի»  
լրագրին կիմացնեն թէ՛ Մարօքի  
գահուն թիկնածուն, որ յաջողած  
է հրագէն ու հրանիթ ձեռք  
ձգել, 2600 հոգիէ բաղկացած

բանակով մը գէպի Թագա կը քա-  
լէ, նպատակ ունենալով նոյն իսկ  
մինչեւ ֆէս երթալ :

— Հոմի քաղաքական շրջա-  
նակները, Ալէքիբրասի համաժա-  
գովու մասին շատ յոռետես են :  
Խլուր մը առաջըք առնելու հա-  
մար, ձեռք առնուելիք չափերը  
կամ կերպով մը համաժողովը քա-  
նի մը ամիս յետաձգել կուտու-  
նասիրեն :

#### ՃԱՐՕՆԻԱ

Նիւ Եօրքէն «Պիլինինցիայի իւս»  
ին քաղուած հեռագրի մը հա-  
մաձայն, պաշտօնական աղբ. մը  
հրատարակուած է, որով կը յայ-  
տարարուի թէ՛ յառաջիկայ մարտ  
ամսոյ 20 ին, ձորնիւն 500 մի-  
լիօն ֆրանքի ներքին փոխառու-  
թիւն պիտի կնքէ 5 0/0 տոկոսով :

#### ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս Ա Ր Ս Ո Ւ Ռ Ն Ե Ր  
Գնարական Բանաստեղծութիւնք  
Ե Ր Գ Ե Գ  
Վ Ա Ր Ո Ւ Ժ Ա Ն Դ Ա Ն Ի Է Լ  
ՎԵՆԵՏԻԱ—Ս. ՂԱԶՍՐ  
1 9 0 6  
Փոքրիկ հատորիկ մը մերթ սիրուն  
երգերով, ինչպէս Հաշիշը, մո-  
խիբն երուեն առջեւ Վեշ-  
տել եւայն.

Լոյս տեսաւ Ի Լոնտօն «ՊԱՏԱՆԻ»  
ամսաթերթի տպարանէն.  
ՊԱՏԱՆԻԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴ-  
ՐՈՅ ԵՒ ԱՌԱՅՆՈՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՀԱՐՑԻ. Հեղինակութիւն Բյօֆ. Թու-  
մայեանի. Նիւթին շահեկանութիւնը  
եւ հեղինակին հմտութիւնը եւ ոճը  
մեծ արժէք կուտան այս 670 էջերէ  
բաղկացեալ և երկու հատոր բաժ-  
նուած գրքին. Գինը Պուլկարիոյ հա-  
մար 4.40 ֆր. փոստով 4 80 ֆր.

ՊՐՊԱՆԻ ԵՐԿՍՐԱՆ, կը պարու-  
նակէ 400 հատ ընտրեալ ազգային  
երգեր, Գինը Պուլկարիոյ համար 1.  
բոստով 1.10 :

Փափաքողները կրնան դիմել հե-  
տեւեալ Հասցէին

Représantante de la Revue «Badani» chez  
M-r Avedis Melidonian — Varna

Bulgarie  
Վճարուիները պէտք է կանխիկ ըլլան :

Պրական, Հասարակական, Գաղափարական և Տնտեսագիտական	Պրական, Հասարակական, Գաղափարական և Տնտեսագիտական	Պրական, Հասարակական, Գաղափարական և Տնտեսագիտական	Պրական, Հասարակական, Գաղափարական և Տնտեսագիտական	Պրական, Հասարակական, Գաղափարական և Տնտեսագիտական	Պրական, Հասարակական, Գաղափարական և Տնտեսագիտական
Պրական, Հասարակական, Գաղափարական և Տնտեսագիտական	Պրական, Հասարակական, Գաղափարական և Տնտեսագիտական	Պրական, Հասարակական, Գաղափարական և Տնտեսագիտական	Պրական, Հասարակական, Գաղափարական և Տնտեսագիտական	Պրական, Հասարակական, Գաղափարական և Տնտեսագիտական	Պրական, Հասարակական, Գաղափարական և Տնտեսագիտական